ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅԱՆ
ԳՆՈՒՄՆԵՐԻ ՀԵՏ ԿԱՊՎԱԾ ԲՈՂՈՔՆԵՐ
ՔՆՆՈՂ ԱՆՁ

ք. Երևան 07.09.2018թ.

Ո Ր Ո Շ Ո Ւ Մ
ՀՀ ԳՆՈՒՄՆԵՐԻ ՀԵՏ ԿԱՊՎԱԾ ԲՈՂՈՔՆԵՐ
ՔՆՆՈՂ ԱՆՁԻ
թիվ ԳԲԽ-ԷՍ-2018/97

ՀՀ գնումների հետ կապված բողոքներ քննող անձը՝ (այսուհետ՝ նաև Բողոքներ քննող անձ) քննելով «ՆՈՈՒԹ.ԱՄ» ՍՊԸ-ի կողմից 28.08.2018թ. ներկայացրած բողոքը (այսուհետ՝ նաև Բողոք) և կից փաստաթղթերը, պարզեց հետևյալը.

1. **«ՆՈՈՒԹ.ԱՄ» ՍՊԸ-ի ներկայացրած փաստերը, հիմնավորումները և պահանջը.**

«ՆՈՈՒԹ.ԱՄ» ՍՊԸ-ն (այսուհետ՝ նաև Ընկերություն) ՀՀ գնումների հետ կապված բողոքներ քննող անձին 28.08.2018թ. ներկայացրել է բողոք, որով հայտնել է հետևյալը.

«Բողոքի հիմքերն ու հիմնավորումները.

Ընկերությունը զբաղվում է համակարգչային տեխնիկայի ներկրմամբ և վաճառքով: Ընկերությունը ցանկանում է մասնակցել «ԴԴ-ԳՀԱՊՁԲ-18/38» ծածկագրով գնման ընթացակարգի հրավերի Հավելվածի 1-ին և 2-րդ չափաբաժիններում նշված՝ սերվերների և համակարգիչների համար Պատվիրատուի հետ պայմանագիր կնքելու նպատակով գնումների գործընթացին, սակայն Պատվիրատուի կողմից առաջադրված պայմանները ՀՀ օրենսդրությանը չհամապատասխանելու արդյունքում, առանց այդ պայմանները ՀՀ

օրենսդրությանը համապատասխանեցնելու Ընկերությունը զրկվում է մասնակցության հնարավորությունից:

Հավելվածի 1-ին չափաբաժնում Սերվերների «Տեխնիկական բնութագիր»-ը մասում նշված է՝

«Տեսակը՝ Tower, պրոցեսոր՝ առնվազն 3.4GHz,6C, 20MB, օպերատիվ հիշողություն՝ 32Gb, կոշտ սկավառակ՝ 2x1TB 2,5" SATA 6Gbps, կոշտ սկավառակ՝ SSD 4x1TB, RAID կարգավորիչ՝ RAID (0,1,5,10), առնվազն VGA մուտք, առնվազն 4xUSB 2.0 մուտք, հեռակակառավարում, ցանցային քարտ՝ առնվազն 2x1Gb, սկավառակակիր՝ DVD-RW, ստեղնաշար (USB),օպտիկական մկնիկ (USB), նույն արտադրողի ինչ սերվերն է, երաշխիք՝ 3 տարի:

Մոնիտոր առնվազն 19′, կետայնությունը՝ 1600x900, արձագանքման ժամանակը՝ 12մվ, միացումը՝ VGA, մոնիտորը պետք է լինի նույն արտադրողի, ինչ սերվերն է, երաշխիք՝ 3 տարի»:

Հավելվածի 2-րդ չափաբաժնում Համակարգիչների «Տեխնիկական բնութագիր»-ը մասում նշված է՝

«Տեսակը՝ Tower, պրոցեսոր՝ առնվազն 3.7GHz, 2 Cores, 3MB Smart Cache, RAM DDR4 4GB (1x4GB) 2133MHz, ավելացնելու հնարավորությամբ, կոշտ սկավառակ՝ 500GB SATA (7200 պտույտ/ր.), սկավառակակիր՝ DVD-RW LAN, առնվազն 2xUSB 3.0, 4xUSB 2.0, VGA մուտք, աուդիո բնիկ, Wi-Fi, Bluetooth, SD քարտեր կարդալու հնարավորություն, Windows 10 Professional ՕՀ (ռուսերեն կամ անգլերեն) ակտիվացված, MS Office Home and Business 2016 (ռուսերեն կամ անգլերեն) ակտիվացված, սնուցման բլոկի հզորությունը 240Վտ, USB ստեղնաշար (լարով) և USB օպտիկական մկնիկ (լարով), գործարանային կոմպլեկտ (նույն արտադրողից ինչ համակարգիչն է), երաշխիք՝ 3 տարի:

Մոնիտոր առնվազն 21.5′, կետայնությունը՝ 1920x1080, կոնտրաստը՝ առնվազն 1000:1, արձագանքման ժամանակը՝ 5մվ, միացման տեսակը՝ VGA, մոնիտորը պետք է լինի նույն արտադրողի ինչ համակարգիչն է, երաշխիքը՝ 3 տարի»:

Օրենքի 13-րդ հոդվածը սահմանում է՝

1. Գնման առարկայի բնութագրերը պետք է ամբողջությամբ և հստակ նկարագրեն ձեռք բերվող ապրանքի, աշխատանքի կամ ծառայության հատկանիշները, դրանց ձեռքբերման և վճարման պայմանները՝ բացառելով տարակերպ մեկնաբանությունը: Գնման առարկայի բնութագրերը, որոնք ներառում են նաև պայմանագրի գինը, ընդգրկվում են պայմանագրում:

2. Գնման առարկայի բնութագրերը՝

1) պետք է մրցակցության հավասար պայմաններ ապահովեն հնարավոր մասնակիցների համար.

2) չպետք է հանգեցնեն գնումների գործընթացում մրցակցության համար չհիմնավորված խոչընդոտների առաջացմանը.

3) պետք է լինեն օբյեկտիվորեն հիմնավորված և համարժեք լինեն այն կարիքին, որի բավարարման նպատակով կատարվում է տվյալ գնումը.

4) ներառում են գնման առարկայի մասնագրի, տեխնիկական տվյալների, իսկ աշխատանքների դեպքում՝ նաև աշխատանքների ծավալաթերթի, ժամանակացույցի և այլ ոչ գնային պայմանների ամբողջական և համարժեք նկարագրությունը:

3. Ելնելով գնման առարկայի առանձնահատկությունից՝ դրանց հատկանիշները հնարավորինս ներառում են ձեռք բերվող ապրանքի, աշխատանքի կամ ծառայության որակին, ստանդարտին, անվտանգությանը, պայմանական նշաններին, տերմինաբանությանը, փաթեթավորմանը, բեռնաթափմանը, չափին, նախագծերին, ինչպես նաև գնման առարկայի այլ հատկանիշներին վերաբերող պայմանների հստակ նկարագրությունը՝ հիմնված միջազգային ստանդարտների և Հայաստանի Հանրապետությունում գործող նորմատիվատեխնիկական փաստաթղթերի, ստանդարտների, իսկ դրանց բացակայության դեպքում՝ ժամանակավոր տեխնիկական պայմանների վրա:

4. Գնման առարկայի հատկանիշները կարող են սահմանվել նաև որպես կատարողականի կամ գործառութային (ֆունկցիոնալ) նկարագրեր, որոնք պետք է ներկայացվեն բավարար ճշտությամբ՝ հնարավորություն տալով մասնակիցներին և պատվիրատուին ճշգրիտ ընկալել պայմանագրի առարկան:

5. Գնման առարկայի հատկանիշները չպետք է պահանջ կամ հղում պարունակեն որևէ առևտրային նշանի, ֆիրմային անվանմանը, արտոնագրին, էսքիզին կամ մոդելին, ծագման երկրին կամ կոնկրետ աղբյուրին կամ արտադրողին, բացառությամբ այն դեպքերի, երբ անհնար է գնման առարկայի բնութագրումն առանց դրանց: Հղումներ օգտագործելու դեպքում հատկանիշների բնութագիրը պետք է պարունակի «կամ համարժեք» բառերը»:

Համեմատություն անցկացնելով հոդվածի բովանդակությամբ առաջադրված պայմանների և Հավելվածի 1-ին և 2-րդ չափաբաժնիններում նշված Սերվերների և Համակարգիչների «Տեխնիկական բնութագիրը» մասում նշված տվյալների հետ, ակնհայտ է դառնում, որ Պատվիրատուն չի պահպանել Օրենքի 13-րդ հոդվածի պարտադիր կիրառման ենթակա պահանջները:

Դիտարկումը վերաբերում է Սերվերների «Տեխնիկական բնութագիրը» մասում նշված «պրոցեսոր՝ առնվազն VGA մուտք, օպտիկական մկնիկ (USB), նույն արտադրողի, ինչ սերվերն է, մոնիտոր՝ «միացումը՝ VGA, մոնիտորը պետք է լինի նույն արտադրողի, ինչ սերվերն է» պայմաններին և համակարգիչների «Տեխնիկական բնութագիրը» մասում նշված՝ «պրոցեսոր՝ VGA մուտք, USB ստեղնաշար (լարով) և USB օպտիկական մկնիկ (լարով), գործարանային կոմպլեկտ (նույն արտադրողից ինչ համակարգիչն է), մոնիտոր՝ «միացման տեսակը՝ VGA, մոնիտորը պետք է լինի նույն արտադրողի ինչ համակարգիչն է» պայմանին:

Նշված պայմանների առաջադրումն առաջ է բերում մրցույթի մասնակիցների համար անհավասար պայմաններ, ինչպես նաև հանգեցնում գնումների գործընթացում մրցակցության համար չհիմնավորված խոչընդոտների՝ կոնկրետ արտադրողի պաշտոնական ներկայացուցչի հանդեպ: Մոնիտորի, ստեղնաշարի և մկնիկի նույն արտադրողի լինելու, ինչ սերվերն ու համակարգիչն են, հանգամանքը շատ մասնակիցների համար առաջ է բերում չհիմնավորված խոչընդոտներ, քանի որ շատ հայտնի ապրանքանիշների արտադրողներ, բացի սերվերի և սեղանի համակարգչի պրոցեսորների արտադրանքից, այլ ապրանք չեն արտադրում, հետևաբար, նշված պայմանը կոնկրետ ապրանքանիշի պաշտոնական ներկայացուցչի հանդեպ ստեղծում է անհավասար պայմաններ, քանի որ Ընկերությունը կարող է սերվերի և համակարգչի պրոցեսորներն առաջարկել մեկ արտադրողից, իսկ մոնիտորը, մկնիկը և ստեղնաշարը՝ բոլորովին այլ արտադրողներից, որոնց արտադրանքները տեխնիկական բնութագրերով և որակի չափանիշներով բնավ չեն զիջում այն արտադրողի արտադրանքներին, որոնք արտադրում են և համակարգիչը, և մոնիտորը, և ստեղնաշարը, և մկնիկը: Հետևաբար, ակնհայտ է, որ նշված պայմանի առաջադրումը կոնկրետ արտադրողի պաշտոնական ներկայացուցչին առավելություն և առաջնայնություն են տալիս, ինչն էլ ինքնաբերաբար առաջ է բերելու մրցույթի մասնակիցների համար անհավասար պայմաններ, ինչը ՀՀ օրենսդրության պահանջների կոպիտ խախտում է:

Վերոգրյալը հանդիսանում է նաև ՀՀ Սահմանադրությամբ և «Տնտեսական մրցակցության պաշտպանության մասին» ՀՀ օրենքով Ընկերության համար սահմանված իրավունքների խախտում և սահմանափակում:

ՀՀ Սահմանադրության 11-րդ հոդվածի համաձայն՝ Հայաստանի Հանրապետության տնտեսական կարգի հիմքը սոցիալական շուկայական տնտեսությունն է, որը հիմնված է մասնավոր սեփականության, տնտեսական գործունեության ազատության, ազատ

տնտեսական մրցակցության վրա և պետական քաղաքականության միջոցով ուղղված է ընդհանուր տնտեսական բարեկեցությանը և սոցիալական արդարությանը»:

ՀՀ Սահմանադրության 59-րդ հոդվածի համաձայն՝

1. Յուրաքանչյուր ոք ունի տնտեսական, ներառյալ ձեռնարկատիրական գործունեությամբ զբաղվելու իրավունք: Այս իրավունքի իրականացման պայմանները և կարգը սահմանվում են օրենքով:

2. Մրցակցության սահմանափակումը, մենաշնորհի հնարավոր տեսակները և դրանց թույլատրելի չափերը կարող են սահմանվել միայն օրենքով՝ հանրային շահերի պաշտպանության նպատակով:

3. Շուկայում մենաշնորհ կամ գերիշխող դիրքի չարաշահումը, անբարեխիղճ մրցակցությունը և հակամրցակցային համաձայնություններն արգելվում են»:

«Տնտեսական մրցակցության պաշտպանության մասին» ՀՀ օրենքի 1-ին հոդվածի համաձայն՝ նույն օրենքի նպատակն է պաշտպանել և խրախուսել ազատ տնտեսական մրցակցությունը, ապահովել բարեխիղճ մրցակցության համար անհրաժեշտ միջավայր, նպաստել ձեռնարկատիրության զարգացմանը և սպառողների շահերի պաշտպանությանը Հայաստանի Հանրապետությունում»:

«Տնտեսական մրցակցության պաշտպանության մասին» ՀՀ օրենքի 2-րդ հոդվածի, 1-ին մասի համաձայն՝

1. Նույն օրենքը տարածվում է տնտեսվարող սուբյեկտների, պետական մարմինների, ինչպես նաև դրանց պաշտոնատար անձանց այն գործողությունների կամ վարքագծի վրա, որոնք հանգեցնում են կամ կարող են հանգեցնել տնտեսական մրցակցության սահմանափակմանը, կանխմանը, արգելմանը կամ անբարեխիղճ մրցակցության գործողությանը, բացառությամբ օրենքով նախատեսված դեպքերի, ինչպես նաև վնասել սպառողների շահերը»:

«Տնտեսական մրցակցության պաշտպանության մասին» ՀՀ օրենքի 4-րդ հոդվածի, 1-ին մասում օգտագործվում են հետևյալ հասկացությունները՝

«տնտեսական մրցակցություն կամ մրցակցություն»՝ ապրանքների իրացման կամ ձեռքբերման առավել նպաստավոր պայմանների ապահովմանն ուղղված տնտեսական գործունեություն, որի արդյունքում օբյեկտիվորեն սահմանափակվում են տվյալ ապրանքային շուկայում ապրանքների շրջանառության ընդհանուր պայմանների վրա մրցակիցներից յուրաքանչյուրի միակողմանի ազդելու հնարավորությունները.

«մրցակցության սահմանափակման, կանխման կամ արգելման հատկանիշներ»՝ անձանց խումբ չհանդիսացող տնտեսվարող սուբյեկտների քանակի կրճատում, ապրանքի գնի բարձրացում կամ իջեցում, որոնք կապված չեն ապրանքային շուկայում ապրանքի շրջանառության ընդհանուր պայմանների համապատասխան փոփոխությունների հետ, անձանց խումբ չհանդիսացող տնտեսվարող սուբյեկտների կողմից ապրանքային շուկայում ինքնուրույն գործողություններից հրաժարում, ապրանքային շուկայում ապրանքի շրջանառության ընդհանուր պայմանների սահմանում տնտեսվարող սուբյեկտների միջև հակամրցակցային համաձայնությունների արդյունքով, կամ այլ անձի կողմից տրված՝ նրանց համար պարտադիր կատարման ենթակա ցուցումներին համապատասխան, կամ անձանց խումբ չհանդիսացող տնտեսվարող սուբյեկտների գործողությունների համաձայնեցման արդյունքով, այլ հանգամանքներ, որոնք տնտեսվարող սուբյեկտի համար հնարավորություն են ստեղծում միակողմանիորեն ազդել ապրանքային շուկայում ապրանքի շրջանառության ընդհանուր պայմանների վրա, ինչպես նաև պետական մարմինների և (կամ) դրանց պաշտոնատար անձանց կողմից ապրանքների կամ տնտեսվարող սուբյեկտների նկատմամբ օրենքով չնախատեսված պահանջների սահմանումը:

Վերոգրյալն առավել քան բավարար է արձանագրելու, որ Հավելվածի 1-ին և 2-րդ չափաբաժիններում նշված Սերվերների և Համակարգիչների «Տեխնիկական բնութագիրը» մասում նշված պայմանները ոչ միայն չեն համապատասխանում Օրենքի 13-րդ հոդվածի պարտադիր կիրառման ենթակա պահանջների, այլև ոտնահարում են ՀՀ Սահմանադրությամբ և «Տնտեսական մրցակցության պաշտպանության մասին» ՀՀ օրենքով Ընկերության համար սահմանված իրավունքները:

Ելնելով վերոգրյալից խնդրում եմ Պատվիրատուին պարտավորեցնել Հավելվածի 1-ին և 2-րդ չափաբաժիններում նշված Սերվերների և Համակարգիչների «Տեխնիկական բնութագիրը» մասում նշված պայմանները համապատասխանեցնել Օրենքի 13-րդ հոդվածի և ՀՀ օրենսդրության պարտադիր կիրառման ենթակա պահանջներին»:

Բողոքի քննության վերաբերյալ Բողոքներ քննող անձի կողմից հրավիրված նիստի ժամանակ Ընկերության հիմնադիրը վերաձևակերպեց Բողոքի պահանջը և խնդրեց Բողոքներ քննող անձին պարտավորեցնել «ԴԴ-ԳՀԱՊՁԲ-18/38» ծածկագրով գնման ընթացակարգի հանձնաժողովին չեղյալ հայտարարել ՀՀ դատական դեպարտամենտի կարիքների համար համակարգչային և պատճենահանման սարքավորումների և օժանդակ նյութերի ձեռքբերման նպատակով հայտարարված «ԴԴ-ԳՀԱՊՁԲ-18/38» ծածկագրով գնանշման հարցման ընթացակարգը՝ 1-ին և 2-րդ չափաբաժինների մասով, իսկ նույն

կարիքի բավարարման նպատակով կրկին գնման ընթացակարգ հայտարարելու դեպքում՝ պարտավորեցնել ընթացակարգի հանձնաժողովին ընթացակարգի հրավերով սահմանել գնումների մասին ՀՀ օրենսդրության պահանջներին համապատասխանող՝ մրցակցությունը չսահմանափակող տեխնիկական բնութագիր:

Բողոքի քննության նպատակով Բողոքներ քննող անձի կողմից հրավիրված նիստերին մասնակցում էին Ընկերության հիմնադիր Ներսես Ավդալյանը և տնօրեն Հայկ Պետրոսյանը:

2. <u>ՀՀ դատական դեպարտամենտի կողմից բողոքի վերաբերյալ ներկայացված փաստերը, հիմնավորումները և դիրքորոշումը.</u>

ՀՀ դատական դեպարտամենտը (այսուհետ՝ նաև Պատվիրատու) «ՆՈՈՒԹ.ԱՄ» ՍՊԸ-ի կողմից 28.08.2018թ. Բողոքներ քննող անձին ներկայացված բողոքի վերաբերյալ 04.09.2018թ. թիվ Ե-6923 գրությամբ հայտնել է հետևյալը.

«Դատական դեպարտամենտի բնականոն գործունեությունն ապահովելու նպատակով՝ 2018թ. օգոստոսի 28-ին վերջինիս կարիքների համար համակարգչային տեխնիկայի ձեռքբերման համար Պատվիրատուի համապատասխան ստորաբաժանման կողմից համակողմանիորեն կատարված ուսումնասիրությունների արդյունքում գնահատվել է Պատվիրատուի կարիքը, ըստ այդմ՝ պահպանելով և ղեկավարվելով գնումների մասին ՀՀ օրենսդրությամբ նախատեսված դրույթներով, կազմվել և ներկայացվել է գնման հայտը և էլեկտրոնային գնումների Armeps (<u>www.armeps.am</u>) համակարգի (այսուհետ՝ Համակարգ) միջոցով կազմակերպվել է «ԴԴ-ԳՀԱՊՁԲ-18/38» ծածկագրով գնանշման հարցման ընթացակարգ:

Ընթացակարգով նախատեսված գնման առարկաները եղել են մրցակցային, հստակ, օբյեկտիվորեն հիմնավորված, համարժեք են եղել այն կարիքին, որոնց բավարարման նպատակով կազմակերպվել է տվյալ գնման ընթացակարգը, ներառել են գնման առարկաների մասնագրերը, տեխնիկական տվյալները, ինչպես նաև այլ՝ ոչ գնային պայմանների ամբողջական և համարժեք նկարագրությունները:

Գնման առարկաների հատկանիշները պահանջ կամ հղում չեն պարունակել որևէ առևտրային նշանի, ֆիրմային անվանմանը, արտոնագրին, էսքիզին, կամ մոդելին, ծագման երկրին կամ կոնկրետ աղբյուրին կամ արտադրողին»:

Բողոքներ քննող անձի կողմից հրավիրված նիստին մասնակցում էր Պատվիրատուի լիազորված ներկայացուցիչ Զառա Աբգարյանը:

3. <u>ԳԲԽ-ԷՍ-2018/97 բողոքի քննության համար էական նշանակություն ունեցող փաստերը, Բողոքներ քննող անձի հիմնավորումները և եզրահանգումը.</u>

Բողոքներ քննող անձն ուսումնասիրել է «ՆՈՈՒԹ.ԱՄ» ՍՊԸ-ի կողմից 28.08.2018թ. ներկայացրած բողոքը և կից փաստաթղթերը, «ԴԴ-ԳՀԱՊՁԲ-18/38» ծածկագրով գնանշման հարցման հրավերը (այսուհետ՝ նաև Հրավեր), ՀՀ դատական դեպարտամենտի 04.09.2018թ. թիվ Ե-6923 գրությամբ հայտնած դիրքորոշումը.

Դատական դեպարտամենտի կարիքների համար համակարգչային և պատճենահանման սարքավորումների և օժանդակ նյութերի ձեռքբերման նպատակով հայտարարել է «ԴԴ-ԳՀԱՊՁԲ-18/38» ծածկագրով գնանշման հարցման ընթացակարգ (այսուհետ նաև՝ Ընթացակարգ):

Ընթացակարգի հրավերի մաս կազմող պայմանագրի նախագծին կից ներկայացված թիվ 1 հավելվածով՝ տեխնիկական բնութագրով Բողոքով վիճարկվող՝ 1-ին և 2-րդ չափաբաժինների մասով սահմանվել են հետևյալ հատկանիշները.

«Հրավերով նախատեսված չափաբաժնի համարը՝ 1. Չափաբաժնի անվանումը և ապրանքային նշանը՝ Համակարգչային սերվերներ, Տեխնիկական բնութագիրը՝ տեսակը՝ Tower, պրոցեսոր՝ առնվազն 3.4GHz,6C, 20MB, օպերատիվ հիշողություն՝ 32Gb, կոշտ սկավառակ՝ 2x1TB 2,5" SATA 6Gbps, կոշտ սկավառակ՝ SSD 4x1TB, RAID կարգավորիչ՝ RAID (0,1,5,10), առնվազն VGA մուտք, առ նվազն4xUSB 2.0 մուտք, հեռակակառավարում, ցանցային քարտ՝ առ նվազն 2x1Gb, սկավառակակիր՝ DVD-RW, ստեղնաշար (USB), օպտիկական մկնիկ (USB), նույն արտադրողից, ինչ սերվերն է, երաշխիք՝ 3 տարի:

Մոնիտոր՝ առնվազն 19′, կետայնությունը՝ 1600x900, արձագանքման ժամանակը՝ 12մվ, միացումը՝ VGA, մոնիտորը պետք է լինի նույն արտադրողի ինչ սերվերն է, երաշխիք՝ 3 տարի:

Հրավերով նախատեսված չափաբաժնի համարը՝ 2. Չափաբաժնի անվանումը և ապրանքային նշանը՝ Սեղանի համակարգիչներ, Տեխնիկական բնութագիրը՝ տեսակը՝ տեսակը՝ tower, պրոցեսոր՝ առնվազն 3.7GHz, 2 Cores, 3MB Smart Cache, RAM DDR4 4GB (1x4GB) 2133MHz, ավելացնելու հնարավորությամբ, կոշտ սկավառակ՝ 500GB SATA (7200 պտույտ/ր.), սկավառակակիր՝ DVD-RW, LAN, առնվազն 2xUSB 3.0, 4xUSB 2.0, VGA մուտք, աուդիո բնիկ, Wi-Fi, Bluetooth, SD քարտեր կարդալու հնարավորություն, Windows 10 Professional ՕՀ (ռուսերեն կամ անգլերեն) ակտիվացված, MS Office Home and Business 2016 (ռուսերեն կամ անգլերեն) ակտիվացված, սնուցման բլոկի հզորությունը 240Վտ, USB

ստեղնաշար (լարով) և USB օպտիկական մկնիկ (լարով), գործարանային կոմպլեկտ (նույն արտադրողից ինչ համակարգիչն է), երաշխիք՝ 3 տարի:

Մոնիտոր՝ առնվազն 21.5, կետայնությունը՝ 1920x1080, կոնտրաստը՝ առնվազն 1000:1, արձագանքման ժամանակը՝ 5մվ, միացման տեսակը՝ VGA, մոնիտորը պետք է լինի նույն արտադրողի ինչ համակարգիչն է, երաշխիքը՝ 3 տարի»:

«ՆՈՈՒԹ.ԱՄ» ՍՊԸ-ն ներկայացրած բողոքով հայտնել է, որ Ընթացակարգի գնման առարկայի մասով Պատվիրատուի կողմից սահմանվել են ձեռքբերվող ապրանքի այնպիսի տվյալներ և պայմաններ, որոնք չեն համապատասխանում ՀՀ օրենսդրությամբ սահմանված պահանջներին, ինչի արդյունքում Ընկերությունը փաստացիորեն զրկվում է Ընթացակարգին մասնակցելու հնարավորությունից: Ընկերության նշված դիտարկումը մասնավորապես վերաբերում է սերվերների՝ տեխնիկական բնութագրերով սահմանված՝ «պրոցեսոր՝ առնվազն VGA մուտք, օպտիկական մկնիկ (USB), նույն արտադրողի ինչ սերվերն է, մոնիտոր՝ «միացումը՝ VGA, մոնիտորը պետք է լինի նույն արտադրողից ինչ սերվերն է» պայմանին և համակարգիչների՝ տեխնիկական բնութագրերով սահմանված՝ «պրոցեսոր՝ VGA մուտք, USB ստեղնաշար (լարով) և USB օպտիկական մկնիկ (լարով), գործարանային կոմպլեկտ (նույն արտադրողից ինչ համակարգիչն է), մոնիտոր՝ «միացման տեսակը՝ VGA, մոնիտորը պետք է լինի նույն արտադրողի ինչ համակարգիչն է» պայմանին: Ըստ Ընկերության հիմնադրի՝ Հրավերով նշված պայմանների առաջադրումն առաջ է բերում մրցույթի մասնակիցների համար անհավասար պայմաններ, հանգեցնում է գնումների գործընթացում մրցակցության համար չհիմնավորված խոչընդոտների առաջացմանը՝ կոնկրետ արտադրողի պաշտոնական ներկայացուցչի հանդեպ, քանի որ մոնիտորի, ստեղնաշարի և մկնիկի՝ նույն արտադրողից լինելու, ինչ սերվերն ու համակարգիչն են, հանգամանքը, շատ մասնակիցների համար առաջ է բերում չհիմնավորված խոչընդոտներ, քանի որ շատ հայտնի ապրանքանիշների արտադրողներ, բացի սերվերի և սեղանի համակարգչի պրոցեսորներ արտադրելուց, այլ ապրանքներ (օրինակ, մկնիկ կամ ստեղնաշար) չեն արտադրում, ուստի և Հրավերով սահմանված նմանատիպ պահանջների առկայության պայմաններում հնարավորություն չունեն ներկայացված լինելու Ընթացակարգի շրջանակներում: Ընկերության հիմնադիրը որպես օրինակ մատնանշեց այնպիսի հայտնի արտադրողների, ինչպիսիք են HP կամ DELL ապրանքանիշերը, որոնք չեն արտադրում համակարգչային մկնիկ կամ ստեղանաշար, մինչդեռ արտադրում են բարձրորակ սերվերներ և պրոցեսորներ՝ գերժամանակակից լուծումներով:

Պատվիրատուի ներկայացուցիչն առարկեց, որ Ընթացակարգի հրավերով նախատեսված գնման առարկաների բնութագրերը համապատասխանել են գնումների մասին ՀՀ օրենսդրությամբ սահմանված պահանջներին, այն է՝ եղել են մրցակցային, հստակ ձևակերպված, օբյեկտիվորեն հիմնավորված, համարժեք են եղել այն կարիքին, որոնց բավարարման նպատակով կազմակերպվել է Ընթացակարգը, պահանջ կամ հղում չեն պարունակել որևէ առևտրային նշանի, ֆիրմային անվանմանը, արտոնագրին, էսքիզին, կամ մոդելին, ծագման երկրին կամ կոնկրետ աղբյուրին կամ արտադրողին: Պատվիրատուի ներկայացուցիչը հավելեց նաև, որ Հրավերով նախատեսված պայմաններին բավարարում են մեկից ավելի արտադրողներ, և Բողոքներ քննող անձին ներկայացրեց իր կողմից կազմված ցանկը, որը ներառում է այն արտադրողների անվանումները, որոնք արտադրում են և սերվերներ, և մոնիտորներ, և ստեղնաշարեր, և համակարգչային մկնիկներ:

Բողոքներ քննող անձի այն հարցին, թե արդյո՞ք Պատվիրատուի համար որևէ դժվարություն կառաջանա, եթե սերվերի և համակարգչի պրոցեսորները լինեն մեկ արտադրողից, իսկ մոնիտորը, մկնիկը և ստեղնաշարը՝ մեկ այլ արտադրողից, Պատվիրատուի ներկայացուցիչը հայտնեց, որ չի կարող պատասխանել այդ հարցին, քանի որ չունի համապատասխան գիտելիք այդ բնագավառում, իսկ Բողոքով վիճարկվող՝ Հրավերում ներառված պայմանն առաջադրվել է գնման հայտը նախագծող պատասխանատու ստորաբաժանման կողմից՝ գնման առարկայի համակողմանի ուումնասիրությունից հետո:

«Գնումների մասին» ՀՀ օրենքի (այսունհետ՝ նաև Օրենք) 3-րդ հոդվածի 2-րդ մասի 2-րդ կետի համաձայն՝ գնումների գործընթացը հիմնվում է պայմանագրի կնքման նպատակով մասնակիցների շրջանակի ընդլայնման և նրանց միջև մրցակցության խրախուսման սկզբունքի վրա:

Օրենքի 13-րդ հոդվածի՝

- 1-ին մասի համաձայն՝ գնման առարկայի բնութագրերը պետք է ամբողջությամբ և հստակ նկարագրեն ձեռք բերվող ապրանքի, աշխատանքի կամ ծառայության հատկանիշները, դրանց ձեռքբերման և վճարման պայմանները՝ բացառելով տարակերպ մեկնաբանությունը: Գնման առարկայի բնութագրերը, որոնք ներառում են նաև պայմանագրի գինը, ընդգրկվում են պայմանագրում:
- 2-րդ մասի համաձայն՝ գնման առարկայի բնութագրերը՝

1) պետք է մրցակցության հավասար պայմաններ ապահովեն հնարավոր մասնակիցների համար.

2) չպետք է հանգեցնեն գնումների գործընթացում մրցակցության համար չհիմնավորված խոչընդոտների առաջացմանը.

3) պետք է լինեն օբյեկտիվորեն հիմնավորված և համարժեք լինեն այն կարիքին, որի բավարարման նպատակով կատարվում է տվյալ գնումը.

4) ներառում են գնման առարկայի մասնագրի, տեխնիկական տվյալների, իսկ աշխատանքների դեպքում՝ նաև աշխատանքների ծավալաթերթի, ժամանակացույցի և այլ ոչ գնային պայմանների ամբողջական և համարժեք նկարագրությունը:

ՀՀ կառավարության 04.05.2017թ. N526-Ն որոշմամբ հաստատված «Գնումների գործընթացի կազմակերպման» կարգի (այսուհետ՝ նաև Կարգ) 22-րդ կետի համաձայն՝ գնման առարկայի բնութագրերը և մասնակիցների որակավորման հատկանիշների գնահատմանը ներկայացվող չափանիշները սահմանելիս պետք է հաշվի առնել, որ դրանց պետք է բավարարեն մեկից ավելի հնարավոր մասնակիցներ՝ բացառությամբ օրենքի 23-րդ հոդվածի 1-ին մասի 1-ին կետով նախատեսված պայմաններով գնում կատարելու դեպքերի:

Այսպիսով, Բողոքներ քննող անձն արձանագրում է, որ Հրավերով պահանջվող՝ Ընթացակարգի 1-ին չափաբաժնով նախատեսված գնման առարկաների տեխնիկական բնութագրով ի թիվս այլոց սահմանվել է պահանջ, ըստ որի ձեռքբերվող մոնիտորը, ստեղնաշարը և օպտիկական մկնիկը պետք է լինեն նույն արտադրողի, ինչ սերվերն է, իսկ 2-րդ չափաբաժնով նախատեսված գնման առարկաների տեխնիկական բնութագրով՝ մոնիտորը, ստեղնաշարը և օպտիկական մկնիկը պետք է լինեն նույն արտադրողի, ինչ համակարգիչն է:

Բողոքներ քննող անձն արձանագրում է նաև, որ Պատվիրատուի ներկայացուցչի կողմից չհիմնավորվեց և չապացուցվեց այն հանգամանքը, որ գնման ընթացակարգի հրավերով նախատեսված՝ վերը նշված պայմանը օբյեկտիվորեն հիմնավորված է, անհրաժեշտ է գնման առարկայի առավել արդյունավետ օգտագործման համար, և որ ձեռքբերվող ապրանքների լրակազմում ներառված առանձին ապրանքատեսակների՝ տարբեր արտադրողների կողմից արտադրված լինելու հանգամանքը կարող է որևէ դժվարություն կամ անհամատեղելիության խնդիր առաջացնել Պատվիրատուի համար տվյալ գնման առարկայի շահագործման ընթացքում:

Բողոքներ քննող անձը գտնում է, որ «ԴԴ-ԳՀԱՊՁԲ-18/38» ծածկագրով գնման ընթացակարգի հրավերով նախատեսված՝ գնման ենթակա ապրանքների տեխնիկական բնութագրով սահմանված պայմանը, համաձայն որի՝ Ընթացակարգի 1-ին չափաբաժնով ձեռքբերվող մոնիտորը, ստեղնաշարը և օպտիկական մկնիկը պետք է լինեն նույն

արտադրողի, ինչ սերվերն է, իսկ 2-րդ չափաբաժնով ձեռքբերվող մոնիտորը, ստեղնաշարը և օպտիկական մկնիկը պետք է լինեն նույն արտադրողի, ինչ համակարգիչն է, անհավասար պայման է հանդիսանում հնարավոր մասնակիցների համար, հանգեցնում գնումների գործընթացում մրցակցության համար չհիմնավորված խոչընդոտների առաջացմանը, միաժամանակ չլինելով օբյեկտիվորեն հիմնավորված պահանջ՝ չի բխում գնումների մասին ՀՀ օրենսդրությամբ ամրագրված՝ պայմանագրի կնքման նպատակով մասնակիցների շրջանակի ընդլայնման և նրանց միջև մրցակցության խրախուսման սկզբունքի տրամաբանությունից:

Ելնելով վերոգրյալից և ղեկավարվելով «Գնումների մասին» ՀՀ օրենքի 50-րդ հոդվածի 7-րդ մասի 1-ին կետի «բ» ենթակետով՝ բողոքներ քննող անձը

Ո Ր Ո Շ Ե Ց

1.«ՆՈՈՒԹ.ԱՄ» ՍՊԸ-ի կողմից ՀՀ գնումների հետ կապված բողոքներ քննող անձին 28.08.2018թ. ներկայացրած բողոքը բավարարել մասնակի:

2.Պարտավորեցնել «ԴԴ-ԳՀԱՊՁԲ-18/38» ծածկագրով գնման ընթացակարգի հանձնաժողովին ընդունել՝ ՀՀ դատական դեպարտամենտի կարիքների համար համակարգչային և պատճենահանման սարքավորումների և օժանդակ նյութերի ձեռքբերման նպատակով հայտարարված «ԴԴ-ԳՀԱՊՁԲ-18/38» ծածկագրով գնանշման հարցման ընթացակարգը 1-ին և 2-րդ չափաբաժինների մասով չեղյալ հայտարարելու վերաբերյալ համապատասխան որոշում:

ՀՀ գնումների հետ կապված բողոքներ քննող անձի որոշումն իրավապարտադիր է, որը կարող է փոփոխվել կամ վերացվել, այդ թվում՝ մասնակի, միայն դատարանի կողմից:

ՀՀ գնումների հետ կապված բողոքներ քննող անձի ընդունած որոշումն ուժի մեջ է մտնում այն տեղեկագրում հրապարակելուն հաջորդող օրվանից:

ՀՀ գնումների հետ կապված
բողոքներ քննող անձ՝

ԷՄԻԼ ՍԱՐԳՍՅԱՆ